



## ՄԻԱՑԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԵՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

**ԹՈՒՐԲԻԱՅԷՆ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆՔ**  
**ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՆԱԳՐԱԻՈՒԱԾ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՆ ՈՒ**  
**ԵԿԵՂԵՑԱՊՍՏԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ**

2015-ին հայ ժողովուրդը, Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ սփիւռքի ամբողջ տարածքին, պիտի նշէ Օսմանեան Թուրքիոյ կողմէ կազմակերպուած հայոց ցեղասպանութեան 100-ամեակը:

1915-ի ցեղասպանութեանը զոհ գացին աւելի քան մէկուկէս միլիոն հայեր, ախորի նամբուն վրայ վերապրած հայերը ապաստան գտան Արեւելեան Հայաստանի՝ ներկայիս Հայաստանի Հանրապետութեան, Սուրիոյ, Լիբանանի եւ այլ արաբական երկիրներու մէջ ու աշխարհի տարբեր պետութիւններու մօտ:

Անհատական սեփական կալուածներու կորուստին կողքին, Օսմանեան կայսրութեան ենթակայ Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ, ինչպէս նաեւ Թուրքիոյ այլ շրջաններու մէջ ապրող հայութիւնը կորսնցուց նաեւ եկեղեցապատկան կալուածներ՝ եկեղեցիներ, սրբատեղիներ, վանքեր, կրօնական, կրթական եւ բարեսիրական կեդրոններ, մշակութային ու կրօնական մեծ արժէք ունեցող իրեր՝ խաչքարեր, ձեռագիրներ, սրբանկարներ, եւայլն: Ցեղասպանութեան ենթարկուած ու բռնի միջոցներով տեղահանուած հայ ժողովուրդին պատկանող բոլոր կալուածները սեփականացուեցան Թուրքիոյ պետութեան կողմէ՝ «լքեալ կալուածներ» անունին տակ:

Ցեղասպանութենէն 98 տարիներ ետք, Թուրքիոյ ներկայ պետութիւնը, որպէս իրաւայաջորդը Օսմանեան կայսրութեան, ոչ միայն կը մերժէ ընդունիլ իր նա-

խորդներուն ծրագրած ու գործադրած ցեղասպանութիւնը, այլ կը շարունակէ իր հակահայ ֆաղափականութիւնը՝ բռնագրաւուած պահելով հայ ժողովուրդին կրօնական ու մշակութային արժէքները, եկեղեցապատկան կալուածներն ու իրերը:

Հետեւաբար, կոչ կ'ուղղենք Թուրքիոյ պետութեան եւ կը պահանջենք. –

1) Հայոց ցեղասպանութեան ֆանաչում:

2) Ամբողջական հատուցում հայ ժողովուրդի կրած կորուստներուն եւ մարդկային ու ազգային բռնագրաւուած իրաւունքներուն:

3) Հայկական եկեղեցիներուն, վանքերուն ու եկեղեցապատկան կալուածներուն եւ հոգեւոր ու մշակութային արժէք ներկայացնող իրերուն անյապաղ վերադարձը հայ ժողովուրդին, որպէս անոնց իրաւատէրը:

Աղօթքով յիշելով հայոց ցեղասպանութեան գոհերը՝ կը դատապարտենք ամէն բռնարար՝ ուղղուած աստուածապարգեւ կեանքի, մարդու արժանապատուութեան եւ մարդկութեան խաղաղ համակեցութեան դէմ, որովհետեւ “Աստուած խոովութեան Աստուած չէ, այլ՝ խաղաղութեան” (Ա. Կորնթ. 14.33), ու մարդիկը կը հրաւիրէ սիրոյ, համերաշխութեան եւ գործակցութեան:

Երախտագիտութեամբ կը յիշենք այն բոլոր ժողովուրդներն ու պետութիւնները, որոնք ցեղասպանութեան օրերուն ապաստան տուին տեղահանուած հայերուն եւ հոգատարութիւն ու եղբայրական սէր ցուցաբերեցին հայրենազրկուած ու տարագրուած հայերուն հանդէպ:

Հայ ժողովուրդը յաւէտ երախտապարտ պիտի մնայ նաեւ այն բոլոր պետութիւններուն, որոնք մարդասիրութեան եւ արդարութեան սկզբունքներով առաջնորդուած՝ դատապարտած են ու պաշտօնապէս ֆանաչած հայոց ցեղասպանութիւնը:

Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի սեմին մեր բոլոր կարելիութիւնները ի գործ պիտի դնենք միասնաբար իրականացնելու հայ ժողովուրդին պահանջները՝ յանուն արդարութեան եւ հայութեան իրաւունքներու պաշտպանութեան:

ԱՊՐԻԼ 24, 2013

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ՄԱՅՐ ԱԹՈՌ, Ս. ԷՁՄԻԱԾԻՆ

ԱՐԱՄ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ  
ԱՆԹԻԼԻԱՍ